Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
հունիսի 20 -ի N 757 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում (այսուհետ՝ աշխատակազմ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատակազմում վարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման մեկ միասնական էլեկտրոնային մատյան (այսուհետ՝ մատյան):

3. Մատյանում ըստ հերթականության լրացվում են՝

1) նորմատիվ իրավական ակտի ընդունման և ստորագրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

2) նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը.

3) նորմատիվ իրավական ակտի տեսակը.

4) նորմատիվ իրավական ակտի վերնագիրը:

4. Մատյանի հաշվառման համարների հերթականությունը վերսկսվում է հունվարի 1-ից:

5. Մատյանում նշումները պետք է կատարվեն առանց կրճատումների:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը հաշվառվում, այնուհետև սահմանված կարգով արխիվացվում և պահպանվում են աշխատակազմի կենտրոնական արխիվում, իսկ սահմանված ժամկետների

ավարտից հետո փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ՝ պահպանման:

7. Սույն կարգը տարածվում է նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման վրա, որոնց համար աշխատակազմում վարվում են համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի որոշումների հաշվառման առանձին մատյաններ:

8. Սույն կարգը տարածվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի կողմից ընդունված ներքին և անհատական իրավական ակտերի հաշվառման և պահպանման վրա:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի՝ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող որոշումները ևս հաշվառվում և համար են ստանում մատյանից՝ առանց մատյանում համապատասխան իրավական ակտի վերնագիրը լրացնելու՝ գաղտնիության վերաբերյալ նշումով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ